



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
NATIONAL ACADEMY OF SCIENCE OF THE REPUBLIC OF ARMENIA
«ՓՈՐՁԱՔԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ» ՊՈԱԿ
"NATIONAL BUREAU OF EXPERTISES" SNPO

0004, ք. Երևան, Ծովակալ Իսակովի պող. 24
24 Tsovakal Isakov Ave. 0004, Yerevan

Հեռ.՝ (37410) 777710
Տեղ: (37410) 777710
Ֆաք: (37410) 777704

№ 05/70

27 02 2014թ.

«ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/3» ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով
գնում կատարելու ընթացակարգի հնարավոր
մասնակիցների ղեկավարներին

Հարգելի մասնակից

«ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/3» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերել «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրերով նախատեսված ծառայություններ (գնման հայտը կցվում է):

Ընթացակարգի ծածկագիրն է՝ «ՓԱԲ-ՇՀԾՁԲ-(11/3)-14/2»:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ հայտերը անհրաժեշտ է ներկայացնել ք. Երևան, Իսակովի 24, 2-րդ մասնաշենք N 207 սենյակ հասցեով, Ա. Խաչատրյանին (հեռ. (010) 777710 (152)), մինչև 2014թ մարտի 11-ը, ժամը 12:00-ը:

Հայտերը կբացվեն ք. Երևան, Իսակովի 24, 2-րդ մասնաշենք N 207 սենյակ հասցեով, 2014թ. մարտի 11-ի, ժամը 12:00-ին:

Գնման առարկա է «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կարիքների համար տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների ձեռքբերումը, որոնք կազմված են 3 չափաբաժիններից: Ծառայությունների մատուցման տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերով (ծանուցում):

Ընտրված մասնակիցը որոշվում է տվյալ չափաբաժնի գծով նախատեսված ծառայությունների մատուցման հանրագումարի գծով ցածր գնային առաջարկին նախապատվություն տալու սկզբունքով:

Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը: Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/3» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով (հրապարակված է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում "Շրջանակային համաձայնագրեր" բաժնի "հրավերներում կատարված փոփոխություններ" ենթաբաժնում):

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը և ներկայացվելիք փաստաթղթերի օրինակելի ձևերը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Տնօրենի տեղակալ՝

Ե. Զադոյան

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ
N ՓԱԲ-ՇՀԾՁԲ-(11/3)-14/2

ք. Երևան

“.....” 2014թ.

«Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ -ը, ի դեմս տնօրեն Ա. Զավադյանի, որը գործում է ՊՈԱԿ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից և « ----- » -ը, ի դեմս տնօրեն -----ի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալ մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և առաջին ծառայության մատուցման համար ժամկետը սահմանվում է առնվազն երեսուն աշխատանքային օր, որի հաշվարկը կատարվում է սույն պայմանագիրը կնքելու օրվանից, բացառությամբ այն դեպքերի, երբ Կատարողը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Ծառայություն՝

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանել անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին.

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը,

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագրին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքում այն մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին.

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը.

2.3.2 Սույն պայմանագրի մինչև 25 տոկոսը կարող է իրականացվել գործակալության պայմանագիր կնքելու միջոցով: Գործակալության պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ տվյալ ընթացակարգում հաղթող ճանաչված, սակայն պայմանագիր կնքելուց հրաժարված մասնակիցը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել պատվիրատուին:

3. Ծառայության հանձնումը և ընդունումը

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետև՝ արձանագրություն) ստորագրմամբ: Կատարողը՝ յուրաքանչյուր անգամ Ծառայության մատուցման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է հանձնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված 2):

3.2 Արձանագրություն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և պատվիրատուն՝

ա) Հարցի կանոնավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները:

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից հնգօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ մատուցված Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4. Պայմանագրի գինը

4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության առավելագույն ընդհանուր գինը կազմում է 1000000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողին իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Ծառայությունը ընդունվելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցվելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով, իսկ տույժերի հաշվարկումն իրականացվում է օրացույցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը, տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կատարողին վճարման ենթակա գումարներից:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց: Վաճառողի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում

6. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. Այլ պայմաններ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև պայմանագրի կնքումը Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա, այդ հիմքերն ի հայտ գալուց հետո, Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

Սույն պայմանագրում չի կարող կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

7.4 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում Կողմերի (Կատարող և (կամ) Պատվիրատու) օգուտները խնայողություններ և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասներն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում կատարողի կնքած այդ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով և դրանց համար պատասխանատու է Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած անձը:

7.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.6 Սույն պայմանագիրը կազմված է..... էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1 և 2 հավելվածները հանդիսանում են սույն պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:

7.7 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.8 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ իրավունք:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՅԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ ա տ վ ի թ ա տ ու

«Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ

ք. Երևան, Ծովակալ Իսակովի պող. 24

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ

Հ/Հ 1930003316710100

ՀՎՀՀ 01836525

Կ ա տ ա ռ ո ղ

(ստորագրություն)

Կ.Տ.

(ստորագրություն)

Կ.Տ.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
Մարդատար ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայությունների գնման

Հ/Հ	SU-1, SU-2 ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	Տրանսպորտային միջոցների մակնիշները /տեսակները/ ըստ չափաբաժինների		
		1 չափաբաժին ԳԱՉ-3110	2 չափաբաժին ԳԱՉ-2705	3 չափաբաժին Մերսեդես E320
1	2	3	4	5
	<i>SU-1 ներառվող ծառայությունների անվանում</i>			
1	Բռնկման համակարգի ստուգում			
2	Սառեցման համակարգի ստուգում			
3	Յուղման համակարգի ստուգում			
4	Արտացման համակարգի ստուգում			
5	Կցորդման համակարգի ստուգում			
6	ՓՏ-ի աշխատանքի ստուգում			
7	ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում			
8	Կարդանային փոխանցման աշխատանքի ստուգում			
9	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում			
10	Առջևի և հետևի կամրջակների աշխատանքի ստուգում			
11	Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում			
12	Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում			
13	ABS համակարգի ստուգում			
14	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում			
15	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում			
16	Թափքի վիճակի ստուգում			
17	Տարբեր ագրեգատների յուղերի որակի և մակարդակների ստուգում			
	<i>SU-2 ներառվող ծառայությունների անվանում</i>			
18	Շարժիչի հանում և տեղադրում			
19	Նույնը DOHC (2 բաշխիչ լիսեռ) դեպքում			
20	Նույնը կոնդիցիոների դեպքում			
21	Նույնը ԱՓՏ-ի դեպքում			
22	Շարժիչի վերանորոգում			
23	Նույնը DOHC դեպքում			
24	Նույնը V6-ի դեպքում			
25	Շարժիչի բարձիկի հանում տեղադրում			
26	Բ/լիսեռի կախարիչի հանում և տեղադրում			
27	Նույնը աջի համար-V6			
28	Նույնը ձախի համար-V6			
29	Շարժիչի բլոկի գլխիկի հանում և տեղադրում			
30	Նույնը աջի համար-V6			
31	Նույնը ձախի համար-V6			
32	Շարժիչի գլխիկի միջադիրների փոխարինում			

33	Շարժիչի գլխիկի վերանորոգում			
34	Փականի խցուկի փոխարինում			
35	Նույնը V6-ի դեպքում			
36	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում			
37	Նույնը աջի համար-V6			
38	Նույնը ձախի համար-V6			
39	Նույնը DOHC դեպքում			
40	Բաշխիչ լիսեռի խցուկի փոխարինում			
41	Հրիչների փոխարինում SOHC			
42	Նույնը DOHC դեպքում			
43	Ատամնավոր փոկի փախարինում			
44	Նույնը DOHC դեպքում			
45	Նույնը V6-ի դեպքում			
46	Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում			
47	Նույնը կոնդիցիոների դեպքում			
48	Նույնը DOHC դեպքում			
49	Նույնը կոնդիցիոների դեպքում			
50	Նույնը V6-ի դեպքում			
51	Ծնկաձև լիսեռի հետևի խցուկի փոխարինում			
52	Նույնը ԱՓՏ-ի դեպքում			
53	Սխտցային օղակների փոխարինում			
54	Նույնը DOHC դեպքում			
55	Նույնը V6-ի դեպքում			
56	Թափանիվի հանում և տեղադրում			
	2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ			
57	Յուղի և յուղի գտիչի փոխարինում			
58	Յուղի պոմպի փոխարինում			
59	Նույնը DOHC դեպքում			
60	Նույնը V6-ի դեպքում			
61	Ղեկավարման բլոկի վերանորոգում			
62	Բռնկման կարգավորում			
63	CO կարգավորում			
64	Խարնարակի հանում և տեղադրում			
65	Խարնարակի վերանորոգում			
66	Օդի գտիչի փոխարինում			
67	Ինժեկտորի ֆորսունկաների փոխարինում			
68	Ինժեկտորի ֆորսունկաների մաքրում			
69	Բենզամղիչի փոխարինում			
70	Վառելիքի գտիչի փոխարինում			
71	Վառելիքի բաքի հանում և տեղադրում			
72	Տրամյորի հանում տեղադրում			
73	Տրամյորի վերանորոգում			
	3. Սառեցման և արտացման համակարգ			
74	Հովհարի փոկի հանում և տեղադրում			
75	Հովհարի հանում և տեղադրում			
76	Ռադիատորի հանում և տեղադրում			
77	Նույնը կոնդիցիոների դեպքում			
78	Նույնը ԱՓՏ-ի դեպքում			
79	Ռադիատորի վերանորոգում			
80	Թերմոստատի փոխարինում			
81	Ջրի պոմպի փոխարինում			
82	Նույնը DOHC և V6 դեպքում			

83	Նույնը կոնդիցիոների դեպքում			
84	Ջրի պոմպի վերանորոգում			
85	Նույնը DOHC դեպքում			
86	Նույնը կոնդիցիոների դեպքում			
87	Ընդարձակող բաքի փոխարինում			
88	Խլարարի հանում և տեղադրում			
89	Նույնը DOHC դեպքում			
90	Ռադիատորի փողրակի հանում և տեղադրում			
	4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ			
91	Բանվ. կամ գլխ. գլանի հանում և տեղադրում			
92	Բանվ. կամ գլխ. գլանի վերանորոգում			
93	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում			
94	Կցորդման ոտնակի հանում տեղադրում			
95	Կցորդման ճոպանի հանում տեղադրում			
96	ՓՏ-ի հանում և տեղադրում			
97	ՓՏ-ի վերանորոգում			
98	ՓՏ-ի առանցքակալի փոխարինում			
99	ՓՏ-ի պատյանի հանում և տեղադրում			
100	Վազքաչափի շարժաբերի փոխարինում			
101	ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում			
102	ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում			
103	Նույնը V6-ի դեպքում			
104	ԱՓՏ-ի հանում և տեղադրում			
105	Նույնը V6-ի դեպքում			
106	ԱՓՏ-ի վերանորոգում			
107	Նույնը V6-ի դեպքում			
108	ԱՓՏ-ի յուղի գտիչի փոխարինում			
	5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ			
109	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում			
110	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում, վերանորոգումով			
111	Բաշխիչ տուփի խցուկի փոխարինում			
112	Կարդանի լիսեռի հանում և տեղադրում			
113	Կարդանի լիսեռի հանում և տեղադրում, վերանորոգումով			
114	Կարդանի լիսեռի խաչուկի հանում և տեղադրում			
115	Կարդանի լիսեռի միջանկյալ կախոցի հանում և տեղադրում			
	6. Առջևի և հետևի կամրջակներ			
116	Առջևի կամ հետևի կամրջակի հանում և տեղադրում			
117	Առջևի կամ հետևի կամրջակի լիակատար քանդում և հավաքում			
118	Առջևի կամ հետևի կամրջակի մասնակի քանդում և հավաքում			
119	Առջևի կամ հետևի կամրջակի կիսասոնու հանում և տեղադրում			
120	Կիսասոնու առանցքակալի փոխարինում			
	7. Կախոց			
121	Առջևի կախոցի լիակատար քանդում և			

	հավաքում			
122	Տրավերսի հանում տեղադրում			
123	Ձախ կամ աջ հողակապի հանում և տեղադրում(հատ)			
124	Անվակունդի առանցքակալի փոխարինում			
125	Նույնը հետին տանող ա/մ-ի համար			
126	Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում			
127	նույնը հետևի տանող ա/մ համար			
128	Ձախ կամ աջ հողակապի խցուկների փոխարինում			
129	Ձախ կամ աջ հողակապի առանցքակալների փոխարինում			
130	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում			
131	Ջսպանակի հանում և տեղադրում(հատ)			
132	Ջսպակի հանում և տեղադրում(հատ)			
133	Ջսպանակի վռանների փոխարինում			
134	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում(հատ)			
135	Ներքևի լծակի հանում և տեղադրում(հատ)			
136	Ներքևի լծակի վռանների փոխարինում (մի կողմ)			
137	Առջևի աջ կամ ձախ ձգանների հանում և տեղադրում			
138	Միջին ձգանի հանում և տեղադրում			
139	Ճոճանակախիլն լծակի հանում և տեղադրում			
140	Վերևի լծակի հանում և տեղադրում			
141	Վերևի լծակի վռանների փոխարինում			
142	Գնդե հողակապերի փոխարինում			
143	Ծայրականների հանում տեղադրում			
144	Առջևի կայունարարի հանում և տեղադրում			
145	Առջևի կայունարարի վռանների փոխարինում (հատ)			
146	Առջևի կայունարարի առջևի վռանների փոխարինում			
147	Հետևի զսպանակների փոխարինում			
148	Հետևի ցնցամեղմիչների հանում և տեղադրում			
149	Հետին ձգածողի հանում և տեղադրում (հատ)			
150	Ետևի երկաթաձողի հանում և տեղադրում			
151	Կայունարարի կանգնակների հանում և տեղադրում			
152	Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում			
153	Անկյունագծային լծակի վռանների փոխարինում			
154	Անվաբացքի կարգավորում			
155	Չողման աշխատանքներ 1 քառ. սմ համար			
	8. Ղեկային մեխանիզմ			
156	Ղեկային կալունի հանում և տեղադրում			
157	Նույնը V6-ի դեպքում			
158	Ղեկային կալունի վերանորոգում			
159	ՂԿ-ի առանցքակալի կամ վռանների փոխարինում			

160	ՂԿ-ի հողակապերի հանում և տեղադրում			
161	Հիդրոուժեղարարի պոմպի հանում և տեղադրում			
162	Նույնը DOHC դեպքում			
163	Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում			
164	Նույնը DOHC դեպքում			
165	Հիդրոուժեղարարի փողրակի հանում և տեղադրում			
166	Նույնը DOHC դեպքում			
167	Նույնը կոնդիցիոների դեպքում			
168	ՀՈՒ ՂԿ-ի հանում և տեղադրում			
169	ՀՈՒ ՂԿ-ի վերանորոգում			
	9. Արգելակային համակարգ			
170	Գլխ.գլանի հանում և տեղադրում			
171	Գլխ.գլանի վերանորոգում			
172	Վակուումային ուժեղարարի հանում և տեղադրում			
173	Բանվ.գլանի հանում և տեղադրում			
174	Բանվ.գլանի վերանորոգում			
175	Արգելակային համակարգի օդահանում			
176	Առջևի սուպպորտի հանում և տեղադրում			
177	Հետևի սուպպորտի հանում և տեղադրում			
178	Առջևի սուպպորտի վերանորոգում			
179	Հետևի սուպպորտի վերանորոգում			
180	Արգելակման փողրակի փոխարինում			
181	Առջևի արգելակային կոճղակների փոխարինում			
182	Հետևի սկավառակային կոճղակների փոխարինում			
183	Հետևի կոճղակների փոխարինում			
184	Առջևի արգելակային սկավառակի փոխարինում			
185	Ետևի արգելակային սկավառակի փոխարինում			
186	Արգելակային սեղմակի հանում և տեղադրում			
187	ABS-ի հանում և տեղադրում			
188	ABS-ի վերանորոգում			
189	Ձեռքի արգելակի ճուպանի հանում և տեղադրում			
190	Ձեռքի արգելակի մեխանիզմի վերանորոգում			
	10. Էլեկտրասարքավորում			
191	Էլեկտրասարքավորման վերանորոգում			
192	Չափիչ սարքերի հանում և տեղադրում			
193	Գններատորի հանում և տեղադրում			
194	Նույնը հիդրոուժեղարարի դեպքում			
195	Գններատորի վերանորոգում			
196	Նույնը V6-ի դեպքում			
197	Մեկնարկիչի հանում և տեղադրում			
198	Մեկնարկիչի վերանորոգում			
199	Առջևի լապտերի հանում և տեղադրում			
200	Ետևի լապտերի հանում և տեղադրում			
201	Բռնկման կողպեքի հանում և տեղադրում			

202	Վազբաշափի հանում և տեղադրում			
203	Վազբաշափի ճոպանի հանում և տեղադրում			
204	Սարքերի պանելի հանում և տեղադրում			
205	Արագաշափի հանում և տեղադրում			
206	Ազդանշանի հանում և տեղադրում			
207	Ապակեվագիչի շարժիչի հանում և տեղադրում			
208	Դռների կենտրոնական փականի հանում և տեղադրում			
209	Ազդանշանի համակարգի տեղադրում			
210	Մագնիտոլայի տեղադրում			
211	Վառոցքային լարերի հանում և տեղադրում			
212	Էլ.հաղորդալարերի մասնակի վերանորոգում			
213	Էլ.հաղորդալարերի հիմնական խուրցի հանում և տեղադրում			
214	Էլ.հաղորդալարերի երկրորդային խուրցի հանում և տեղադրում			
215	Էլեկտրական տվիչների փոխարինում			
216	Էլ.անջատիչների փոխարինում			
217	Վառոցքի մոմերի փոխարինում			
218	Կոնդիցիոների լիցքավորում			
219	Կոնդիցիոների վերանորոգում			
	11. Այլ ծառայություններ			
220	Ավտոմեքենայի թափքի հղկում և ներկում 1քառ.դմ-ի համար			
221	Ավտոմեքենայի լվացում			
222	Անվի հանում և տեղադրում			
223	Անվադողի վերանորոգում			
224	Անվի բալանսավորում			
225	Անվի վալց			
226	CO-գոլման աշխատանքներ , <i>գին 1 քառ. սմ-ի համար</i>			
227	Խառատային աշխատանքներ			
228	Փականագործի աշխատանքներ			
229	Քարշարկի ծառայություն գին 1կմ, համար			
	Ընդամենը ծառայություններ			
	SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քաջուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	Տրանսպորտային միջոցների մականիշները /տեսակները/ ըստ չափաբաժինների		
		1 չափաբաժին	2 չափաբաժին	3 չափաբաժին
		ԳԱԶ-3110	ԳԱԶ-2705	Մերսեդես E320
	1. Շարժիչ			
1	Շարժիչի բլոկ			
2	Շարժիչի գլխիկ			
3	Բարձիկ			
4	Շարժիչի գլխիկի միջադիր			
5	Շարժիչի վերանորոգման կ-տ			
6	Շարժիչի բաշխիչ լիսեռ			
7	Շարժիչի փական դուրս մղող			
8	Շարժիչի փական ներս մղող			
9	Շարժիչի փականի խցուկ			
10	Ծնկաձև լիսեռ			
11	Ծնկաձև լիսեռ խցուկ առջևի			
12	Ծնկաձև լիսեռ խցուկ հետևի			

13	Ծնկածև լիսեռի արմատական ներդիրներ			
14	Ծնկածև լիսեռի շարժաթևային ներդիրներ			
15	Հենակային տափողակ			
16	Մխոց			
17	Մխոցային օղակներ			
18	Ատամնանիվ			
19	Ատամնանվի փոկ			
20	Շղթա			
21	Հիդրոնոգան			
22	Հրիչ			
23	Հիդրոհրիչ			
24	Բաշմակ			
25	Հանգստարար			
26	Թափանիվ			
27	Թափանվի պսակ			
28	Խցուկ բաշխիչ լիսեռի			
29	Շկիվ			
30	Շարժաթև			
31	Կարտերի միջադիր			
32	Միջադիր			
	2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ			
33	Յուղ, շարժիչի հանքային, 1 լիտր			
34	Յուղ շարժիչի կիսասինթետիկ, 1 լիտր			
35	Յուղ շարժիչի սինթետիկ, 1 լիտր			
36	Յուղի գտիչ			
37	Յուղի պոմպ			
38	Յուղի պոմպի շարժաբեր			
39	Յուղի ռադիատոր			
40	Յուղի փողրակ			
41	Յուղի ծորակ			
42	Վառոցքի մոմ			
43	Բենզոլաք			
44	Խառնարակ			
45	Խառնարակի վերանորոգման հավաքածու			
46	Ինժեկտորի ֆորսունկա			
47	Վառելանյութի մղիչ էլեկտրական			
48	Վառելանյութի մղիչ մեխանիկական			
49	Վառելանյութի գտիչ			
50	Վառելանյութի գտիչ նուրբ մաքրման			
51	Վառելանյութի փողրակ			
52	Աքսելյատորի ճոպան			
53	Օդի գտիչի			
54	Ջերմաստիճանային տվիչ			
55	Յուղի տվիչ			
56	Բաշխիչ լիսեռի տվիչ			
57	Օդի ծախսի տվիչ			
58	Արագաչափի տվիչ			
59	Հովհարի տվիչ			
60	Ջրի տվիչ			
61	Բենզաքաքի տվիչ			
62	Մարման ընթացքի կարգավորիչ			
63	Մարման ընթացքի տվիչ			

64	Ղեկավարման համակարգիչ			
65	Պարապ ընթացքի տվիչ			
66	Դրոսելային փականի տվիչ			
67	Թթվածնի տվիչ			
	3. Սառեցման և արտածման համակարգ			
68	Հովհարի փոկ			
69	Հովհար			
70	Ռադիատոր			
71	Ընդարձակող բաք			
72	Ռադիատորի փողրակ			
73	Թերմոստատ			
74	Ջրի պոմպ			
75	Ջրի պոմպի առանցքակալ			
76	Ջրի պոմպի թևակ			
77	Սառեցման հեղուկ 1 լիտր			
78	Ջրի պոմպի սոնանիվ			
79	Հոլովակ			
80	Փոկ			
81	Փոկ կոնդիցիոների			
82	Ծորակ			
83	Խլարի ներդիր			
84	Խլարի կախոց			
85	Կրոնշտեյն			
86	Անուր /խամուռ/			
87	Խլար			
88	Ռեզոնատոր			
89	Վառարանի ռադիատոր			
	4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ			
90	Կցորդման բանվորական գլան			
91	Կցորդման գլխավոր գլան			
92	Կցորդման գլանի վերանորոգման հավաքածու			
93	Կցորդման տանող սկավառակ			
94	Կցորդման տարվող սկավառակ			
95	Կցորդման առանցքակալ			
96	Կցորդման փողրակ			
97	Փոխանցման տուփ			
98	ՓՏ-ի առջևի խցուկ			
99	ՓՏ-ի հետևի խցուկ			
100	ՓՏ-ի առանցքակալ			
101	ՓՏ-ի առաջնային լիսեռ			
102	ՓՏ-ի միջանկյալ լիսեռ			
103	ՓՏ-ի եղանիկ			
104	ՓՏ-ի ատամնանիվ			
105	Համաժամիչ			
106	Մուֆտ			
107	ՓՏ-ի վերանորոգման կ-տ			
108	ԱՓՏ-ի գտիչ			
109	ԱՓՏ-ի սկավառակների հավաքածու			
110	ԱՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ			
111	ԱՓՏ-ի յուղ, 1լիտր			
112	Տրանսմիսիոն յուղ, 1 լիտր			
113	ՓՏ-ի առաջնային լիսեռ			

114	Հերմետիկ			
	5. Կարդանային լիսեռ			
114	Կարդանային լիսեռ			
115	Էլաստիկ մուֆտ			
116	Կարդանային լիսեռի միջանկյալ հենակ			
117	Կարդանային լիսեռի խաչուկ			
	6. Առջևի և հետևի կամրջակներ			
118	Ետևի կամ առջևի կամրջակ			
119	Ռեդուկտոր			
120	Գլխավոր փոխանցման ատամնանիվների կ-տ			
121	Դեֆֆերենցիալ			
122	Դեֆֆերենցիալի սատելիտ			
123	Տանող ատամնանվի խցուկ			
124	Տանող ատամնանվի առանցքակալ			
125	Դեֆֆերենցիալի առանցկաքակալ			
126	Կիսաստնի			
127	Կիսաստնու առանցքակալ			
128	Կիսաստնու միջադիր			
129	Կիսաստնու խցուկ			
130	Կարգավորիչ տափողակ			
	7. Կախոց			
131	Տրավերս			
132	Կրոնշտեյն			
133	Չախ կամ աջ հողակապ			
134	Չախ կամ աջ հողակապի փոշեթիկնոց			
135	Անվակունդ			
136	Անվակունդի խցուկ			
137	Անվակունդի ներքին առանցքակալ			
138	Անվակունդի արտաքին առանցքակալ			
139	Հետևի անվակունդի ներքին առանցքակալ			
